ՀԱՅԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՅԻՆ-ՌԱԶՄԱՎԱՐԶԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայաստանից նվաճված երկրամասերում Թեոդոս I-ի (379—395 թթ.), Հուստինիանոս I-ի (527—565 թթ.) և Մավրիկիոսի (582—602 թթ.) կիրառած ռազմական և վարչատերիտորիալ միջոցառումները բխում էին Բյուզանդական կայսրության նվաճողական քաղաքականությունից։ Թեոդոս I-ը Փոքր Հայքը բաժանեց Առաջին (կենտրոնը Սեբաստիա) և Երկրորդ (կենտրոնը Մելիտենե) Հայքերի[1]։ Կայսրության վարչական և ռազմական բաժանումները տրված են Notitia dignitatum *փաստաթղթում, որին մանրամասն անդրադարձել է Ն. Ադոնցը կայսրության արևելյան հատվածի և հատկապես Պոնտական դիոցեզի կազմում հանդես եկած Առաջին և Երկրորդ Հայքերի ու Պողեմոնական Պոնտոսի կապակցությամբ[2]։*

«Մեծ Հայքը», հայկական ինքնավար իշխանությունները՝ «ազգերը»[3] (Անձիտը, Անդեղ-տունը, Հաշտեանքը, Ծոփքը, Ծոփանենե, Բալահովիտը), Առաջին և Երկրորդ Հայքերն ու Պողեմոնական Պոնտոսը Հուստինիանոս I-ը հանձնեց Սիտա (Զետա) զորավարի հրամանատարությանը (մոտ 529—531 թթ.)[4]։ Այս նույն ժամանակաշրջանին է վերաբերում Պրոկոպիոսի հաղորդումը այն մասին, որ Հուստինիանոս I-ը «Մեծ Հայքը», «այլ Հայքը» (ἄλλη Ἀρμενία, *որը ընդդրկում էր նշված իշխանությունների կամ սատրապությունների տարածքը)՝ Մարտիրոպոլսում և Կիթառիճում նոր նշանակված դուքսերով, ինչպես նաև Խորձենը՝ Արտալեսում նշանակված դուքսով, ենթարկեց «Հայքերի» զորավարին, որի նստավայրը Թեոդոսուպոլիսն էր[5]։*

---

[1] *Ն. Ադոնցը ենթադրել է, որ այդ տեղի էր ունեցել 378—386 թթ.* (Н. Адонц. Армения в эпоху Юстиниана. СПб., 1908 (Ереван, 1971), с. 89)։ *386 թ. Թեոդոս I-ի հրապարակած դեկրետում, ինչպես նշել է Ն. Ադոնցը, առաջին անգամ հիշատակվում է Երկրորդ Հայքը։ Փոքր Հայքի բաժանումը Թեոդոս I-ը իրականացրեց 386 թ., Մեծ Հայքի թագավորության (որի հյուսիս-արևմտյան մասը շարունակվեց անվանվել «Մեծ Հայք» կամ «ներքին Հայք»՝* Magnam Armeniam, quae interior dicebatur *կամ* τὴν μεν ἐνδοτάτην)՝ *մեր կարծիքով նախորդ տարում տեղի ունեցած պարսկա-հռոմեական բաժանումից հետո։*

[2] Н. Адонц. Указ. соч., с. 91—104.

[3] Gens *և* ἔθνος *բառերը, նշանակելով ցեղ, ազգ, ազգատոհմ (Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. հ. Ա, Վենետիկ, 1836, Երևան, 1979, էջ 6, այսուհետև ՆԲՀԼ), վերաբերել են հարավարևմտյան Հայաստանի հայկական նախարարական ազգատոհմերին (Ս. Երեմյանը* gens *բառը իրավացիորեն թարգմանել է «ազգեր», տե՛ս Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 57), այլ ոչ թե ինչ-որ «ազգություններին», ինչպես թարգմանել են ոմանք։*

[4] Н. Адонц. Указ. соч., с. 132—137. *Հուստինիանոս I-ի* Codex-*ի՝ **Սիտայի նշանակման հետ կապված հատվածի սկիզբն է.** „Imp. Iustinianus A. Zetae“* (Corpus Juris Civilis, ed. Fratres Kregelii, Band II, Leipzig, 1843, 1. 29. 5, p. 111)։ *«A»-ն ոմանք չեն թարգմանել և բաց են թողել, իսկ մյուսները այն կապել են Զետայի անվան հետ։ Այնինչ անհրաժեշտ է թարգմանել. «Կայսր Հուստինիանոս Օգոստոսը Զետային»։*

[5] Procopius, with an English transl. by H. B. Dewing, VII, Buildings, London, 1954, III. i. 17, 28. ii. 1—2. iii. 14. v. 12 (*այսուհետև՝* Proc. Aed.)։ *Նշված հրատարակու-*

Հուստինիանոսի Codex-ում նշված վերոհիշյալ վեց իշխանությունների («ազգերի») փոխարեն նրա 31-րդ նովելլայում, ինչպես նաև Պրոկոպիոսի երկում հինգն են հիշատակված[6], չի նշված Անգեղ-տունը[7]։

Պրոկոպիոսը հիշատակել է «այլ Հայք» (վերը խոսքը վերաբերում էր հինգ սատրապություններին) և «մյուս Հայք», որի մասին գրել է. «Ἐκ δὲ Κιλικίας ἔς τε Θεοδοσιούπολιν καὶ Ἀρμενίαν τὴν ἑτέραν τόνδε Χορζανὴ μὲν ἡ χώρα καλεῖται»[8], այսինքն Կիլիկիայից դեպի Թեոդոսուպոլիս և «մյուս Հայք» գնացողի (ճանապարհին հանդիպող) երկիրը (կամ գավառը) կոչվում է Խորձեան։ Անգլերեն այդպես էլ թարգմանված է՝ «the other Armenia»[9]։

Ἕτερος (α, ον)-ը «մյուս»-ն է, ἄλλος (η, ο)-ը «այլ»-ը[10]։ Ἕτερος-ը նշա-

---

թյունում թարգմանված է. „the General of the two Armenias", իսկ ընդարում՝ τὸν τῶν Ἀρμενίας στρατηγὸν (էջ 204—205)։ Թարգմանիչը չնայած շեղվել է բնագրից, սակայն հասկացել է, որ խոսքը նախքան Հուստինիանոսի կատարած վերափոխությունների ժամանակաշրջանին է վերաբերում։ Իսկ ոմանք սխալմամբ կարծել են, թե խոսքը բացի Առաջին և Երկրորդ Հայքերից նաև Երրորդ և Չորրորդ Հայքերի մասին է։ Պրոկոպիոսի՝ Տրապեզունտին վերաբերող շարադրանքից (III. vii. 1—3) նույնպես չի հետևում, թե այդ ժամանակ Հուստինիանոսը կազմակերպել էր Առաջին Հայքը Հուստինիանուպոլիս մայրաքաղաքով, չնայած վերջինս արդեն կառուցել էր Վժանից որոշ հեռավորության վրա գտնվող Զրմես (Դումինա) կոչված վայրում։ Ն. Ադոնցը իրավացիորեն գրել է. «Պրոկոպիոսը Aed.-ում հիշատակում է Հուստինիանուպոլիսը, երբ, ըստ երևույթին, դեռևս չգիտեր Հուստինիանոսի 536 թ. ռեֆորմի մասին» (Н. Адонц. Указ. соч., с. 174, прим. 1)։ Պրոկոպիոսի երկի նշված հատվածում խոսքը Բյուզանդիայի տիրապետության տակ գտնվող հայկական հողերից (որոնց միացվեց նաև Պողեմոնական Պոնտոսը) ռազմական համակարգ ստեղծելու մասին է։ Իսկ Հուստինիանոսի 8-րդ նովելլային (535 թ. ապրիլի 15) կցված ցուցակից հետևում է, որ Առաջին և Երկրորդ Հայքերի ու «Մեծ Հայքի» քաղաքացիական իշխանությունը հանձնված էր արխոնտներին (Н. Адонц. Указ. соч., с. 161, 173)։

6 Կ. Դյուտերբոկը հնարավոր է, որ Անգեղ-տունը ձուլված էր Մեծ Ծոփքին, սակայն Ծոփքի արևմտյան մասը թյուրիմացաբար համարել է Մեծ, իսկ արևելյանը՝ Փոքր Ծոփք (Կ. Դյուտերբոկ. Հռոմեական Հայաստան և հռոմեական սատրապությունները Դ—Զ դարերուն, թարգմ. Հ. Մ. վ. Նորշուան. Վիեննա, 1914, էջ 44—45, 47)։ Ն. Ադոնցը պարզել է, որ ընդհակառակը, հյուսիս-արևմտյանը՝ Փոքր, իսկ հարավ-արևելյանը Մեծ Ծոփքն (Sophanena) էր, որի մի մասը կոչվել է Անգեղ-տուն։ Գիտնականը նշել է նաև, որ Պրոկոպիոսը հինգ սատրապությունները շփոթել է «հինգ անդրտիգրիսյան երկրների» հետ (էջ 38, 42, 44), որը քիչ հավանական է. Կ. Թումանովի կարծիքով Անձիտը Անգեղ-տան հետ էր հանդես գալիս, իսկ Փոքր Ծոփքը Արածանիից հարավ էր (C. Toumanoff. Studies in Christian Caucasian History. Georgetown, 1963, p. 131, 166—167, 172)։ Մինչդեռ Ն. Ադոնցը ապացուցել է, որ Շանունի (կամ Փոքր) Ծոփքը Արածանիից հյուսիս է գտնվում (Н. Адонц. Указ. соч., с.38)։

7 Մովսես Խորենացու «Պատմութիւն Հայոց»-ում հիշատակված Անգեղ-տունը Անանիա Շիրակացու «Աշխարհացույցում» բացակայում է։ Այնտեղ առկա է Նիրկերտ գավառը Աղձնիքի կազմում։ Հ. Հյուբշմանը նշել է, որ Անգեղ-տան հետ ձուլված Մեծ Ծոփքը Նիրկերտ անվամբ և Աղձնիքը 591 թ. միացան Վերին Միջագետքին (Հ. Հյուբշման. Հին Հայոց տեղվո անունները, թարգմ. Բ. Պիլեկիկճյան. Վիեննա, 1907, էջ 157)։ Հ. Մանանդյանը գրել է, որ Անգեղ-տունը, որը մեջ է բերված Խորենացու մոտ իբրև «Տորք Անգեղայ» տոհմի անուն, չէր կարող նշված լինել «Աշխարհացույցում», որովհետև VI դարում այդ գավառը ձուլված էր ուրիշ գավառի հետ (Հ. Մանանդյան. Խորենացու առեղծվածի լուծումը. Երևան, 1934, էջ 50)։ Այստեղից երևում է, որ Խորենացու երկը «Աշխարհացույցից» հին է, իսկ Հ. Մանանդյանը փորձում էր ապացուցել, որ Խորենացին ուշ շրջանի հեղինակ էր։ Ս. Երեմյանը Անգեղ-տունը նշել է Աղձնիքի կազմում (Ս. Տ. Երեմյան. նշվ. աշխ., էջ 35)։

8 Proc. Aed., III. iii. 9.

9 Նույն տեղում, էջ 193։

10 ՆԲՀԼ. հ. Ա, էջ 82, հ. Բ, էջ 282։

նակում է նաև «երկրորդ»[11]։ Սակայն Պրոկոպիոսի «մյուս Հայք»-ը չի կարելի շփոթել «Երկրորդ Հայք»-ի հետ։ «Երկրորդ Հայքը» Հուստինիանոսի Նովելլաների Δευτέρα Ἀρμενία-ն է[12]։

Պրոկոպիոսը նախորդ շարադրանքում արդեն խոսել էր «Մեծ Հայքի» և «այլ Հայքի» (ἄλλη Ἀρμενία, որը ընդգրկում էր նշված «ազգերի» տարածքը) մասին։ Իսկ Թեոդոսուպոլիսի հետ հիշատակելով «մյուս Հայքը» (ἑτέρα Ἀρμενία), Պրոկոպիոսը, ըստ երևույթին, նկատի է ունեցել կա՛մ «Մեծ Հայքը», կա՛մ էլ հաջորդ հատվածում հիշատակվող ἄλλη Ἀρμενία-ն։ Վերջինիս կազմում Սեբաստիա, Նիկոպոլիս[13], Սատաղ և այլ քաղաքների հիշատակությունից երևում է, որ խոսքը Թեոդոս Մեծի ժամանակից սերող Առաջին Հայքի մասին է[14], նախքան Հուստինիանոսի վերափոխությունները։

536 թ. մարտի 18-ին հրապարակած 31-րդ Նովելլայով Հուստինիանոս I-ը արմատապես վերափոխեց Արևմտյան Հայաստանում գոյություն ունեցող վիճակը։ Կազմվեցին Առաջին Հայքը (կենտրոնը Հուստինիանուպոլիս), Երկրորդ Հայքը (Սեբաստիա), Երրորդ Հայքը (Մելիտինե), Չորրորդ Հայքը (Մարտիրուպոլիս)[15]։ Հուստինիանոսը այս նահանգների միջև սահմանեց հետևյալ ենթակարգը. չորս Հայքերից «երկուսը սպեկտաբիլային են և կառավարվում են՝ մեկը ենթահյուպատոսի, մյուսը կոմեսի կողմից, ընդ որում Առաջին Հայքի կառավարիչը ենթահյուպատոս է, իսկ Երրորդ [Հայքինը]՝ կոմես։ Երկրորդ և Չորրորդ [Հայքերի] կառավարիչները Օրդինար են... մենք սահմանում ենք, որ Առաջին Հայքի կառավարչին՝ այսինքն ենթահյուպատոսին, ուղղվեն բողոքարկումները [Երկրորդ] Հայքից, ուրեմն Սեբաստիայով, իսկ Երրորդ Հայքի կոմեսին, որը Մելիտինեում է, մինչև նշված գումարի չափով՝ Չորրորդ Հայքից»[16]։

Չորս Հայքերին վերաբերող միակ անգերազանցելի հետազոտությունը մնում է Ն. Ադոնցի ֆունդամենտալ մենագրությունը։ Ինչպես նշել է գիտնականը, Հուստինիանոսի միջոցառումները կոչված էին առաջին հերթին կարգավորելու և ապահովելու պետական գանձումները, քանի որ տեղական բնակչությունը հրաժարվում էր հարկեր վճարելուց[17]։ Հետագայում, Մավրիկիոսի միջոցառումները, որոնք կիրառվեցին Հայաստանից զավթած ավելի ընդարձակ տարածքում, նույնպես ծառայեցին կայսրության նվաճողական շահերին (հարկերի գանձում, հայկական ռազմական ուժերի տեղահանում և օգտագործում Բյուզանդիայի հեռավոր սահմանների վրա և այլն)։

---

[11] A Greek—English Lexicon, compiled by H. G. Liddell and R. Scott, vol. I, Oxford, 1951, p. 702.

[12] Н. Адонц. Указ. соч., с. 161, 166—168.

[13] Սեբաստիա և Նիկոպոլիս քաղաքների մասին պատմիչը նշել է. «τῶν ἐν Ἀρμενίαις πόλεων» Proc. Aed., III. iv. 11, տե՛ս նաև Н. Адонц. Указ. соч., с. 141—156։

[14] Իսկ անգլերեն հրատարակությունում այս վերջին ἄλλη Ἀρμενία-ն ծանոթագրությունում նույնացված է Փոքր Հայքի հետ (Proc. Aed., III. iv. 1, էջ 194)։ Այնինչ, Պրոկոպիոսին հայտնի է, որ Փոքր Հայքը հին անվանում է (Proc. Aed., III. iv. 15)։

[15] Յուրաքանչյուր նահանգի տերիտորիալ կազմի մասին տե՛ս Н. Адонц. Указ. соч., с. 165—173։

[16] Թարգմանել ենք Ն. Ադոնցի ռուսերեն թարգմանությունից (Н. Адонц. Указ. соч., с. 168—169), որը համեմատել ենք հունարեն բնագրի հետ։ Ոմանց կողմից նովելլաի այս հատվածը հայերեն սխալ է թարգմանված։ Այդ ժամանակաշրջանը լուսաբանող հունարեն և լատիներեն վերոհիշյալ աղբյուրների առանձին հատվածների հայերեն թերի թարգմանության և սխալ մեկնաբանության հետևանքով չորս Հայքերի մասին, դեռևս Ն. Ադոնցի մշակած ճիշտ տեսակետի կողքին, այժմ գոյություն ունի մի սխալ կարծիք, ըստ որի Չորրորդ Հայքը գոյություն է ունեցել նախքան Հուստինիանոսի կատարած վերափոխությունները և նույնիսկ հայ Արշակունիների թագավորության ժամանակ։

[17] Н. Адонц. Указ. соч., с. 198.

Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու և Հովհաննես Դրասխանակերտցու երկերում տեղեկություններ են պահպանվել տարբեր ժամանակներում հայկական հողերում կազմակերպված բյուզանդական նահանգների վերաբերյալ։ Խորենացու երկի ներկայիս վիճակում մեզ հասած շարադրանքում չորս Հայքերի մասին տարբեր կարգի տեղեկություններ են հաղորդվում։ Դրանք միասին միայն մեկ անգամ են հիշատակվում, մյուս դեպքերում առկա է միայն Չորրորդ Հայքը՝ Ծոփքի առնչությամբ։ «Աստ յարևմուտս շարժեալ (Արամը—Է. Դ.) ...հասանէ ի կողմանս Կապադովկիացւոց, ի տեղի մի, որ այժմ ասի Կեսարիա... եւ ինքն թողեալ զոմն Մշակ անուն յազգէ իւրմէ, և բեւր մի ի զօրաց իւրոց ի վերայ աշխահին, և ինքն դառնայ ի Հայս։ Բայց հրաման տայ բնակչաց աշխարհին՝ ուսանել զխոսս և զլեզուս հայկական. վասն որոյ մինչև ցայսօր ժամանակի անուանեն Յոյնք զկղիմայն զայն Պռոտին Արմենիան, որ թարգմանի Առաջին Հայք։ Եւ զդաստակերտն զոր շինեաց յանուն իւր Մշակ կողմնապետն Արամայ... անուանէին հինք աշխարհին՝ Մաժաք, որպես ոչ կարելով ուղղախօսել. մինչև յետոյ յոմանց ընդարձակագոյն շինեալ՝ անուանեցաւ Կեսարիա։ Ըստ նմին օրինակի ի տեղացն այնոցիկ մինչև ցբուն իւր սահմանսն, զբաղում անբնակ երկիր ելից բնակչօք, որք Երկրորդ և Երրորդ անուանեցան Հայք, այլ և Չորրորդ։ Այս է առաջին և ճշմարիտ պատճառն վասն անուանելոյ զարևմտեան մեր կողմն Առաջին և Երկրորդ, այլ և Երրորդ և Չորրորդ Հայք»[18]։ Ստ. Մալխասյանցը, Խորենացուն համարելով V դարի հեղինակ, իրավացիորեն եզրակացրել է, որ «Երրորդ» և «Չորրորդ» Հայք բառերը ընդմիջարկություններ են Խորենացու երկում[19]։ Աշ. Աբրահամյանը առաջ քաշեց Խորենացու երկում և Անանիա Շիրակացու «Աշխարհացույցում» Արևմտյան Հայաստանը չորս մասի բաժանված լինելու մասին հիշատակության հարցը[20], սակայն որքանով մեզ հայտնի է, այդ ուղղությամբ նա չի շարունակել իր հետազոտությունը։

Խորենացու երկից հետևում է, որ Հայաստանն էր Արամի բուն երկիրը։ Արամը, ըստ պատմիչի, «զբազում անբնակ երկիր» լցրեց բնակիչներով մինչև «ցբուն իւր սահմանսն», այսինքն՝ մինչև Հայքի սահմանները։ Կապադովկիայից մինչև Մեծ Հայքի արևմտյան սահմանը տարածվում էր Փոքր Հայքը, որը «նայած հայտնի էր Խորենացուն»[21], սակայն Արամի կապակցությամբ նա այն չի հիշատակում։ Այդ թերևս, վկայում է այն մասին, որ Խորենացին Արամի հետ կապված հնագույն հայկական ավանդությունը բերում է ավելի ուշ ժամանակներին վերաբերող պատմաաշխարհագրական հենքի վրա[22]։ Վերոհիշյալ հատվածում հիշատակվում է, որ նշված տարածքը Արամը անվանեց Առաջին, Երկրորդ, Երրորդ և Չորրորդ Հայք։ Ասել է, թե չորս Հայքերը գտնվել են Արամի բուն երկրից՝ Հայքից դուրս։ Ուրեմն, ըստ այդպիսի շարադրանքի, նախ սխալ տեղեկություն է հայտնվում Չորրորդ Հայքի մասին, որ իբր այն ի թիվս մյուս Հայքերի տարածվում էր մինչև Արամի բուն երկրի սահմանները, իսկ այնուհետև այդ տեղեկությունը հակասության մեջ է մտնում հաջորդ հաղորդումների հետ՝ Մեծ Հայքի թագավորության արևմուտքում գտնվող Ծոփքի («Չորրորդն կոչեցեալ Հայոց») կապակցությամբ։ Վերջինիս մասին կարդում ենք. «Հաստատէ (Վաղարշակը—Է. Դ.) զմեծ նահապետութիւնն Ծոփաց ի

---

18 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913, Ա, ժդ։ Խորենացուն ուշ շրջանի հեղինակ համարողները այս հատվածը այդ տեսանկյունից են քննում։

19 Մովսես Խորենացի. Հայոց պատմություն. Երևան, 1940, էջ 268, ծան. 57։

20 Աշ. Աբրահամյան. Խորենացուն վերագրվող «Աշխարհացույց»-ի հեղինակի հարցի շուրջը. Երևան, 1940, էջ 58, 84։

21 Մովսես Խորենացի, Ա, իթ։

22 Եթե նույնիսկ ենթադրենք, որ Խորենացին Մեծ Հայքի հետ Փոքր Հայքն էլ էր նկատի ունեցել Արամի բուն երկրի սահմաններում՝ որպես Հայոց հնագույն պետության անքակտելի մաս, ապա այս դեպքում ևս, ըստ Խորենացու երկի ներկա վիճակում մեզ հասած շարադրանքի, նշված հատվածի Չորրորդ Հայքը մնում է Արամի բուն երկրից դուրս։

Չորրորդն կոչեցեալ Հայս», «Արքեղայոս, որ էր կարգեալ ի վերակացութիւն Չորրորդն կոչեցեալ Հայոց, կշտամբեալ ի նմանէ (Ռոստակէս—Արիստակէս—Է. Դ.), սպանանաց ի դիպող ատուր, և պատահեալ ի ճանապարհի Ծոփաց գաւառին, սպան զնա սրով. և ինքն գնաց փախստական ի Տաւրոս կիւլիկեցւոց: Իսկ զմարմին երանելւոյն բարձեալ աշակերտաց, բերին յեկեղեաց գաւառն, հանգուցանել ի Թիլն, յիւրում աւանին»[23]: Եթե Խորենացին իրոք իմանար Չորրորդ Հայքի մասին, ապա այն չէր տեղադրի մի դեպքում Եփրատից արևմուտք, իսկ մյուս դեպքում՝ արևելք, այլ միշտ կնշեր Եփրատից արևելք, ինչպես հետևում է այս վերջին հատվածներից: Նշենք նաև, որ Խորենացին հիշատակում է Անձիտը, Անգեղ-տունը, Հաշտեանքը, այլ առիթներով՝ կրկին Ծոփքը, սակայն ոչ մեկի կապակցությամբ Չորրորդ Հայքը նրա երկում այլևս չի նշված:

Խորենացու երկի մեզ հասած շարադրանքից հետևում է, որ Կապադովկիան Մաժաք-Կեսարիա քաղաքով հանդերձ եղել է Առաջին Հայքի կազմում: Այստեղ արտացոլվել և միահյուսվել են տարբեր ժամանակներին վերաբերող տեղեկություններ. 1. Խորենացին տեղյակ էր Առաջին և Երկրորդ Հայքերի կազմավորմանը, քանի որ այդ տեղի էր ունեցել իր ապրած ժամանակից մի քանի տասնամյակ առաջ: 2. Խորենացին պետք է նաև տեղյակ լիներ, որ Փոքր Հայքը, որի հյուսիսային մասից Թեոդոս Մեծը կազմավորեց Առաջին Հայքը, մինչև III դարի վերջը հանդես էր եկել Կապադովկիա նահանգի կազմում: Նույնիսկ վերջինից Փոքր Հայքի անջատվելուց և հետագայում Առաջին և Երկրորդ Հայքերի բաժանվելուց հետո էլ Սեբաստիայում և Մելիտինեում գտնվող դրանց մետրապոլտությունները ճանաչում էին իրենց նախկին մետրապոլիայի՝ Կեսարիայի աթոռի ավագության իրավունքը և միայն Քաղկեդոնի 451 թ. ժողովից հետո անմիջապես կախման մեջ դրվեցին Կոստանդնուպոլսի հայրապետից[24]: 3. Խորենացուն հասել էին նաև հնագույն տեղեկություններ՝ կապված Արամի և Պայապիս Քաաղեայի կռվի (որը, ըստ որոշ գիտնականների կարծիքի, Զևսի և Տյուփոնի կռվի մի այլ տարբերակն է) ու ἄριμοι (ըստ Մարկվարտի՝ արմեններ)[25] ցեղի հետ:

Ի տարբերություն Խորենացու երկի, Շիրակացու «Աշխարհացույցում» Առաջին Հայքը (Առաջին) Կապադովկիայից արևելք է նշված: «Առաջին Հայք, յելից կալով Առաջին Կապադովկիոյ առ երի Երկրորդ Հայոց, և սահմանի յելից Եփրատաւ. և լեառն ունի զԱոգեոս, և գետ զԱլիս և այլ մասունս»[26]: Խորենացին չի հիշատակում Աոգեոս լեռը և Առաջին Կապադովկիան, այլ գրում է Մաժաք-Կեսարիայի և Կապադովկիայի մասին: Կապադովկիայի և Փոքր Հայքի

23 Մովսես Խորենացի, Բ, ը, դա: Հմմտ. «Արքեղաւոս ոմն կուսակալ Ծոփաց աշխարհին՝ կշտամբեալ ի նմանէ սակս չար գործոց իւրոց, ըստ դիպմանց իմն ճանապարհի ուրեմն աշխարհի Ծոփաց՝ ժպրհեալ ոխերիմ մտօք սպանանէ զսուրբն սրով, և փախստեայ ինքն գնացեալ յարեմուտս Տօրոսի: Զոր ապա բարձեալ զնշխարհսն մարմինն նորուն աշակերտացն՝ տարեալ հանգուցին յեկեղեաց գաւառն ՚ի Թիլն աւանի» (Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց. Թիֆլիս, 1912, էջ 41):

24 Н. Адонц. Указ. соч., с. 68, 72, 360.

25 J. Markwart. Die Entstehung und Wiederherstellung der armenischen Nation. Potsdam, 1919, S. 66–68. տե՛ս Հ. Մանանդյան. Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության. Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 25—26:

26 «Աշխարհացույցի» այն ձեռագրերում, որոնցում Կապադովկիան նշված է առանց «Առաջին» բառի, Աոգեոսի փոխարեն առկա է «գեննոս» կամ «զգեննոս» (Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 582, 1717, 5613): Սա վկայում է այդ ձեռագրերի գրչական կապի մասին: Միշտ «Առաջին Կապադովկիոյ» և «զԱոգեոս» ընթերցումներն են: Որոշ ձեռագրեր այստեղ հիշատակում են «երի Երկրորդ Հայոց» (ՄՄ, № 582, 696, 1717, 2370, 4284, 5613), իսկ մյուսները՝ «երր Երրորդ Հայոց» (ՄՄ, № 1267, 1459, 1486, 1898, 2019, 2291, 2748, 3691, 3941, 5120, 7993): Նախընտրությունը պետք է տալ «Երկրորդ Հայք» ընթերցվածին, քանի որ Առաջին Հայքի նկարագրությանը նախորդող շարադրանքում խոսքը «Երկրորդ Հայքի» (ՄՄ,

հետ կապված վերոհիշյալ պատմական իրողությունը[27] պետք է ինչ-որ չափով ազդած լինի «Աշխարհացույցի» շարադրանքի վրա, և Առգեոս լեռան հիշատակությունը Առաջին Հայքի կազմում[28] թերևս դրա արգասիքը լինի։

Առաջին Հայքը, ըստ Շիրակացու «Աշխարհացույցի», սահմանակից էր Առաջին Կապադովկիային[29] և ընկած էր Ալիս գետի ավազանում (հյուսիս-արևելյան մասում), իսկ Երկրորդ Հայքը գտնվում էր դրանից հարավ։ Այդ համապատասխանում էր 386 թ. մինչև Հուստինիանոս I-ի վերափոխությունները գոյություն ունեցած վիճակին[30]։

Երկրորդ Հայքի մասին «Աշխարհացույցի» տեքստում կարդում ենք. «Երկրորդ Հայք. յելից կալով [Կի]լիկիոյ առ Տաւրոս լերամբ, ունի լերինս երիս, և գետս չորս և դրունս երկու ելանելոյ Ասորւոց»[31]։ Մխիթարյանների մատենադարանի № 1245 ձեռագրում (թ. 18) առկա է. «Երկրորդ Հայք, որ արդ կոչին Առաջին Հայք՝ յելից կալով Կիլիկ[ի]ո[յ]», որից հետո՝ «առ Տաւրոս» բառերի վերևում ավելացված են «որ է Սասուն» բառերը։ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերում, որքանով մեզ հայտնի է, չկա «որ արդ կոչին Առաջին Հայք» արտահայտությունը, իսկ № 2370 ձեռագրի 254բ էջի ձախ սյունակի վերջում գրված «լիկիոյ» (Կիլիկիոյ—Է. Դ.) բառից հետո ջնջում է կատարված և ավելի մուգ թանաքով գրված է. «որ է Սա», բայց աջ սյունակը սկսվում է առանց ջնջումի, արդեն ձեռագրի թանաքով և նույն գրչի կողմից գրված «սուն» բառամասով, որին հաջորդում են «առ Տօրոս» բառերը և շարունակությունը։ Ինչպես տեսնում ենք, Մաշտոցի անվան Մատենադարանի № 2370

№ 2370, 4284, Վենետիկի Մխիթարյանների Մատենադարանի ձեռ. № 1245) մասին է, որը մի շարք ձեռագրերում ուղղակի նշված է «Հայք» (ՄՄ, № 582, 696, 1267, 1459, 1486, 1717, 1898, 2019, 2291, 2748, 3941, 5120, 5613, 7993)։

27 Կղավդիոս Պտղոմեոսը Փոքր Հայքը հիշատակել է Կապադովկիա նահանգի կազմում (Ptol. V. 6)։

28 Առգեոսի և Մաժաքի հարևանությունը հիմք ընդունելով, Ս. Երեմյանը ենթադրել է, որ «Աշխարհացույցում» Առգեոսը մտցվել է Խորենացու ազդեցությամբ։ Ս. Երեմյանը առաջարկում է վերականգնել. «[Աշխարհ Առաջին Հայք՝ որ արդ կոչին] Երկրորդ Հայք, որ կայ յելից Կապադովկիոյ, և երկայն տարածի մինչև ցԵփրատ, և լեառն ունի զԱռգէոս։ Եւ ունի Ալիս գետ և այլ գետս երկուս... և լերինս բազումս և մեծամեծս» (Ս. Տ. Երեմյան. «Աշխարհացույցի» սկզբնական բնագրի վերականգնման փորձ.—«Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 1, էջ 251)։

29 Կապադովկիան 371 թ. բաժանվեց երկու նահանգի, իսկ 535/6 թ. Հուստինիանոսը միավորեց Առաջին և Երկրորդ Կապադովկիաները (տե՛ս Н. Адонц. Указ. соч., с. 88, 163)։

30 Ուրեմն, իրոք պետք է հիմք ընդունել «առ երի Երկրորդ Հայոց» ընթերցվածը։ Ս. Երեմյանը նշել է, որ «Աշխարհացույցում» Փոքր Հայքը բերվում է ըստ նախքան 536 թ. գոյություն ունեցած վիճակի։

31 Աշխարհացոյց է դարու, էջ 15. տե՛ս К. П. Патканов. Армянская география VII в. СПб., 1877։ «Աշխարհացույցի» ընդարձակ խմբագրությունում «առ Տօրոս լերամբ»-ից հետո կարդում ենք. «...յերի Ամանոս լերին, որ բաժանէ ընդ նա և ընդ Կոմագէնի Ասորոց մինչև ցԵփրատ։ Ունի և այլ լերինս Զիգոն և զԲասիլիկոն և զԿոորմանդոն. և գետ զնոյն զՊիւամոս և զՊառատիս. և զԿալկաս և զԿառոմոսոս. և դրունս բ. ելանելո Ասորոց» (Մխիթարյանների մատ., ձեռ. № 1245, էջ 37—38)։ ՄՄ № 2370 ձեռագրում, ի տարբերություն ՄՄ վերոհիշյալ այլ ձեռագրերի, այդ տեղում հիշատակվում են Ամանոսի լեռները և Կոմագենեն։ № 696, 1459, 1486, 2019, 2291, 2748, 3941, 5120 ձեռագրերում այս տեղում գետեր չեն հիշատակվում։ № 582, 1717, 4284, 5613-ում նշված է «գետս գ», իսկ ՄՄ № 1898, 2370, 7993 ձեռագրերում՝ «գետս դ», որոնց անունները բերված են Վեն. Մխիթ. մատ. ձեռ. № 1245-ում։ Վերջինում եղած «որ արդ կոչին Առաջին Հայք»-ը Ս. Երեմյանը սրբագրել է «որ արդ կոչէին Երրորդ Հայք»՝ այն կապելով Հուստինիանոս I-ի կազմակերպած նահանգի հետ («Պատմա-բանասիրական հանդես», 1973, № 1, էջ 249—250)։ ՄՄ նշված ձեռագրերում «լիկիոյ» է, իսկ Ք. Պատկանյանի հրապարակած «Աշխարհացույցի» տեքստում և Վենետիկի Մխիթարյանների մատենադարանի № 1245 ձեռագրում առկա է «Կիլիկիոյ»։

ձեռագրում ևս առկա են ընդմիջարկված «որ է Սասուն» բառերը, միայն թե այստեղ ընդմիջարկությունը կատարվել է ձեռագրի արտագրության ժամանակ, իսկ Մխիթարյանների մատենադարանի № 1245 ձեռագրում այն ավելացվել է։ Ընդմիջարկողները Կիլիկյան Տավրոսի մասին եղած տեղեկությանը կցել են իրենց բացատրությունը Հայկական Տավրոսում գտնվող Սասունի մասին։

ՄՄ № 2370 ձեռագրում Երրորդ Հայքի մասին 254բ էջում կարդում ենք. «Երրորդ Հայք, որ կայ յելից կալով Կապադովկիոյ. և երկայն տարածի, մինչև ցնփրատ, և ունի այլ գետս բ. և լերինս բազումս»։ ՄՄ № 582, 696, 1267, 1486, 1748, 1898, 2019, 2291, 3691, 3941, 4284, 7993 ձեռագրերում «Երրորդ»-ի փոխարեն այս տեղում գրված է «Երկրորդ» (№ 582 ձեռ. «կ» տառից հետո ջնջում կա, այնուհետև շարունակությունն է), իսկ ՄՄ № 1717 և 5613 ձեռ.՝ «Հայք են»[32]։ «Աշխարհացույցի» այս հատվածում ճիշտը «Երրորդ Հայք» ընթերցումն է։ Կապադովկիայի մասին տեղեկությունը վերաբերում է այն ժամանակաշրջանին, երբ Հուստինիանոս I-ը վերամիավորեց Առաջին և Երկրորդ Կապադովկիաները, իսկ Երկրորդ Հայքը դարձրեց Երրորդ Հայք։

Անանիա Շիրակացին, աշխատելով տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող նյութերի վրա, հիմնական քարտեզագրական աղբյուր է ունեցել Կլավդիոս Պտղոմեոսի (83—168) և Պապոս Աղեքսանդրացու (մոտ. 320—380) երկերը։ Անանիա Շիրակացին չնայած գրել է Առաջին, Երկրորդ և Երրորդ Հայքերի մասին, սակայն Մեծ Հայքի սահմանը արևմտյան կողմից նշել է Փոքր Հայքը. «Մեծ Հայք են, յելից կալով [Պոնտոս] Կապադովկիոյ եւ Փոքր Հայոց, առ Եփրատ գետով մերձ ի Տաւրոս լեառն, որ բաժանէ զնա ի Միջագետաց»[33]։ Այստեղ Շիրակացու աղբյուրներն են հնագույն քարտեղագրական նյութերը[34]։

Եթե հնարավոր լիներ ընդունել վերոհիշյալ սրբագրությունները («[Աշխարհ Առաջին Հայր՝ որ արդ կոչին] Երկրորդ Հայք» և «Աշխարհ Երկրորդ Հայք, [որ արդ կոչին Երրորդ Հայք]»), ապա խնդիրը միանշանակ և լուծումը պարզ կլիներ, քանի որ այդ տեղեկությունները կվերաբերեին միայն Հուստինիանոս I-ի ժամանակաշրջանին։ Սակայն հարցը բարդանում է ոչ միայն նրանով, որ առկա ձեռագրերը այդպիսի ընթերցումներ չունեն և նման վերականգնումների հնարավորություն չեն ընձեռում, այլև այդպիսի վերականգնումների հետևանքով «Աշխարհացույցի» երեք Հայքերից մեկը՝ Առաջին Հայքը, դուրս է մնում, քանի որ այդ դեպքում պետք է խոսվեր նաև Հուստինիանոսի Առաջին Հայքի մասին, որը, սակայն, իրոք բացակայում է «Աշխարհացույցում»։ Իսկ եթե ենթադրենք, որ ճիշտ է ընդարձակ խմբագրության ընթերցումը («Աշխարհ Երկրորդ Հայք, որ արդ կոչին Առաջին Հայք»), ուրեմն պետք է ընդու-

---

32 Վենետիկի Մխիթ. մատ. № 1245 ձեռագրում այս հատվածը չկա։ Ա. Սուքրին իր կողմից հրապարակած «Աշխարհացույցի» տեքստի այդ բացակայող հատվածը քառակուսի փակագծերում լրացրել է Առաջին և Երրորդ Հայքերի մասին այն տեղեկություններով (Աշխարհացույց Մովսեսի Խորենացւոյ, էջ 25. տե՛ս Géographie de Moïse de Corène d'après Ptolémée, texte arm., trad. en français par le Ar. Soukry, Venise, 1881), որոնք առկա են այլ օրինակներում (հմմտ. Աշխարհացույց է զարու, էջ 15. տե՛ս К. П. Патканов. Указ. соч.)։ Իսկ Սենթ-Մարտենի կողմից հրապարակած «Աշխարհացույցի» տեքստում սկզբում հիշատակվում է Երրորդ Հայքը, այնուհետև, Առաջին Հայքի նկարագրության կապակցությամբ, կրկին Երրորդ Հայքն է նշված, մինչդեռ Երկրորդ Հայքը բերված է այս հատվածի վերջին պարբերությունում (M. J. Saint-Martin. Mémoire historique et géographiques sur l'Armenie. T. II, Paris, 1819, p. 354)։

33 Փոքր Հայքը հիշատակվում է նաև Չորրորդ Հայքի մի գավառի նկարագրությունում. «Դարէբ գաւառ, ընդ որս եկեալ Արածանի խառնի յեփրատ ի քաղաքն Լուսաթառիճ, և երթալով դմտիւք՝ ելանէ ի սահմանս Փոքր Հայոց, յելից Մելիտինէ» (տե՛ս Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 105, 107)։

34 Ptol. V. 6, 12.

նենք, թե այստեղ անմիջապես խոսվում է Մավրիկիոսի կողմից կազմավորված Առաջին Հայքի մասին, առանց Հուստինիանոսի Երրորդ Հայքի հիշատակության, քանի որ Թեոդոս Մեծի Երկրորդ Հայքը Հուստինիանոսը վերանվանեց Երրորդ Հայք, որը Մավրիկիոսը դարձրեց Առաջին Հայք։ Ա. Սուքրիի կողմից կատարված փակագծային վերականգնումները ընդունելու դեպքում կստացվի, որ միևնույն ժամանակ գոյություն ունեին Թեոդոսի և Մավրիկիոսի Առաջին Հայքերը և Հուստինիանոսի Երրորդ Հայքը։ Իսկ եթե ընդունենք, որ անհրաժեշտ է «Առաջին» բառի տեղում գրել «Երրորդ», ապա կհետևի, որ Հուստինիանոսի Երրորդ Հայքը երկու անգամ է նկարագրվել։ Այսպիսով, մեզ հասած ձեռագրերից կարելի է առայժմ միայն եզրակացնել, որ «Աշխարհացույցում» Առաջին և Երկրորդ Հայքերի մասին եղած տեղեկությունները վերաբերում են IV դարի վերջից մինչև Հուստինիանոս I-ի վերափոխություններն ընկած ժամանակաշրջանին, իսկ Երրորդ Հայքին վերաբերող տեղեկությունները՝ 536 թ. մինչև Մավրիկիոսի վերափոխություններն ընդգրկող շրջանին[35]։

Հովհաննես Դրասխանակերտցին երկու անգամ անդրադառնում է չորս Հայքերին, երբ պատմում է Արամի, իսկ այնուհետև՝ Մավրիկիոսի գործունեության մասին։ Արամը «ղկապուտկեցիս ևս... ընդ իւրեաւ նուաճեալ սեպհականէր. և զկղիմայն զայն և զպռովտոնն ըստ իւրում իսկ անուանն Արմենի անուանէր, որ մինչև ցայսօր այս անուն Յունականաց անտի աշխարհին այնմիկ անուանի»[36]։ Դրասխանակերտցին կամ, ավելի հավանական է, նրա ձեռագրի հետագա արտագրողները Խորենացու բնագրի «Պռոտին» բառը գարձրել են «պռովտոնն»։

Թեև Դրասխանակերտցու մոտ նույնպես Առաջին Հայքի կազմավորումը կապվում է Արամի գործունեության հետ, սակայն հյուսիսային սահմանը տրված է Թեոդոս I-ի վարչական բաժանմանը համապատասխան։ «Իսկ յԱրմենէն լայնմանէ կոչեցելոյ մինչև ցկողմանս Պոնտացւոց Առաջին Հայք զաշխարհն անուանեաց»[37]։ Հայտնի է, որ Թեոդոս I-ի Առաջին Հայքը իր կազմավորումից մինչև 536 թ. հյուսիսից սահմանակից էր Պոզեմոնական Պոնտոսին։ Դրասխանակերտցին իր շարադրանքի շարունակությունում Թեոդոս I-ը և Հուստինիանոս I-ի Երկրորդ Հայքերին վերաբերող տեղեկությունները իրար է շաղկապել. «և ի Պոնտոսէ մինչև ցոլորտս քաղաքին Մելտինոյ Երկրորդ Հայք»[38]։ Թեոդոս I-ի Երկրորդ Հայքը չի հարել Պոնտոսին, իսկ Հուստինիանոսի Երկրորդ Հայքը՝ Մելիտինեին։ Մելիտինեն Թեոդոս I-ի Երկրորդ Հայքի կենտրոնն էր, իսկ Սեբաստիան՝ Հուստինիանոսի Երկրորդ Հայքի, որը հյուսիսից հարում էր պոնտական հողերին։ Թեոդոսի Առաջին Հայքի մի մասը մտել էր Հուստինիանոսի նորակազմ Առաջին Հայքի մեջ։ Ուրեմն, այստեղ Դրասխանակերտցու մոտ իրոք միևնույն՝ «Երկրորդ Հայք» անունը կրող և տարբեր ժամանակներում գոյություն ունեցած նահանգների մասին եղած տեղեկությունները շաղկապվել են։ Եթե նկատի ունենանք նաև, որ աղբյուրում Մելիտինեն հիշատակված է Երրորդ Հայքում («և ի Մելտինոյ մինչև ցսահմանս Ծոփայ՝ Երրորդ Հայք»), ապա այս հատվածում, բացի վերոհիշյալից, համատեղվել է նաև տեղեկությունն Հուստինիանոսի Երրորդ Հայքի մասին։

Չորրորդ Հայքի վերաբերյալ Դրասխանակերտցին այս հատվածում գրել է. «Եւ ի Ծոփայ մինչև ցքաղաքն Մարտիրոսաց և աշխարհն Աղձնեաց արևմրտեայ Չորրորդ Հայք»[39]։ Եթե այնպես հասկանանք, որ այս նահանգի սահ-

35 Վենետիկի Մխիթ. մատ. № 1245 ձեռագրի «որ արդ կոչին Առաջին Հայք» արտահայտությունը, եթե գրչական ընդմիջարկում չհամարվի, ապա անհրաժեշտ կլինի այնպես բացատրել, որ հակասություն չստեղծվի մյուս Հայքերի մասին եղած հաղորդումների հետ։

36 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 18։

37 Նույն տեղում։

38 Նույն տեղում։

39 Այնուհետև Դրասխանակերտցին ամփոփում է. «Այս մինչև ցսահմանս բնիկ տերութեան իւրոյ։ Իսկ զսեպհական և զբնիկ աշխարհ իւր համատարած զսա Մեծ Հայք անուանէ» (Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 18)։ Ինչպես նշեցինք, Խորենացու ձեռագրերում

մանը հասնում էր մինչև Մարտիրոսաց (Մարտիրուպոլիս) քաղաքը (առանց այն ընդգրկելու) և Աղձնիքի արևմտյան սահմանը, ապա կհետևի, որ նկատի էր առնված Մարտիրուպոլիսի (Նփրկերտի) սահմանը, կամ այլ կերպ ասած՝ Նփրկերտ գավառի (ըստ «Աշխարհացույցի» Աղձնիքի արևմտյան մասում էր գտնվում) սահմանը։ Այս, թերևս, այն Չորրորդ Հայքն էր, որը, ինչպես ստորև կտեսնենք, հիշատակված է «Աշխարհացույցում»։ Իսկ եթե ենթադրենք, որ Մարտիրուպոլիսը և արևմտյան Աղձնիքը (Նփրկերտ գավառը) Դրասխանակերտցու կողմից այնուամենայնիվ նկատի էին առնված այստեղ հիշատակված Չորրորդ Հայքի կազմում, ապա կհետևի, որ խոսքը Հուստինիանոս I-ի Չորրորդ Հայքի մասին է, որին պատմիչը մասամբ[40] անդրադարձել է իր երկի մյուս հատվածում՝ գրելով Մավրիկիոսի գործունեության մասին. «Չորրորդն կոչեցեալ Հայք, յորում մայրաքաղաք է Մարտիրոսացպօլիս, այսինքն՝ Նփրկերտ, Յուստիանունիստ, ընա գրէ ի դիւան արքունի»[41]։

Այս հատվածում Դրասխանակերտցին կրկին անդրադարձել է վերոհիշյալ Հայքերին. «Նախ զԱրմէնին զայն, որ Առաջին Հայքն անուանիւր՝ Երկրորդ Հայք ընա Մօրիկ կոչեաց, յորում մայրաքաղաք է Սեաստիայ»[42]։ Այս հաղորդման կապակցությամբ Գելցերը նշել է, որ Դիոկղետիանոսի ժամանակվա Առաջին Հայքը, Սեբաստիա կենտրոնով, Հուստինիանոսի և Մավրիկիոսի ժամանակ դարձավ Երկրորդ Հայք[43]։ Այնինչ, Առաջին Հայքը առաջացավ Թեոդոս Մեծի ժամանակ։ Հյուբշմանը և Գուբերը գտնում էին, որ Դրասխանակերտցին սխալվում էր Մավրիկիոսին վերագրելով Երկրորդ Հայքի կազմավորումը Առաջին Հայքի այն մասից, որտեղ գտնվում էր Սեբաստիան. այդ իրականացրել էր Հուստինիանոսը[44]։ Կարծում ենք, որ Դրասխանակերտցու այդ հաղորդման մեջ պետք է որոշ չափով արտացոլված լիներ նաև Մավրիկիոսի ժամանակ գոյություն ունեցած վիճակը։ Այդ առնչությամբ անհրաժեշտ է անդրադառնալ պատմիչի հետևյալ հաղորդմանը. «Իսկ զՊոնտոս, յորում մայրաքաղաք է Տրապիզոն՝ կոչէ ընա Մասն Մեծ Հայոց»։ Այստեղից հետևում է, որ Մավրիկիոսը վերափոխել էր Հուստինիանոսի Առաջին Հայքը և դրա հյուսիսարևմտյան մասից կազմել Մասն Մեծ Հայոց նահանգը, իսկ մնացյալից՝ մեկ ուրիշ նահանգ. «Դարձեալ զաշխարհն Կարնայ, յորում մայրաքաղաք է Թէո-

---

ընդմիջարկված Երրորդ և Չորրորդ Հայքերին վերաբերող տեղեկությունները հակասություն են առաջացրել նրա շարադրանքի տարբեր հատվածների միջև։ Դրասխանակերտցու ձեռքին եղել է Խորենացու երկի այդ կարգի ընդմիջարկված ձեռագրական օրինակը, որտեղ առաջացած հակասությունը փոխանցվել է Դրասխանակերտցու երկին։ Դա ակնհայտ է, քանի որ չորս Հայքերն ըստ Դրասխանակերտցու տարածվում էին «մինչև ցսահմանս բնիկ տէրութեան» Արամի։

40 Կարծում ենք մասամբ, որովհետև Հուստինիանոս I-ի Չորրորդ Հայքը (կենտրոնը Մարտիրուպոլիս) միայն Նփրկերտի գավառով չէր սահմանափակված, այլ ավելի ընդարձակ էր։

41 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68։ Եթե ընդունենք, որ վերը Դրասխանակերտցին Չորրորդ Հայքը նշել էր այն ընդգրկմամբ (համապատասխանելով Մավրիկիոսի «այլ Չորրորդ Հայքին»), ինչպես բերվում է «Աշխարհացույցում», ապա վերջին հատվածում նշված Չորրորդ Հայքը կհամապատասխանի Մավրիկիոսի կազմավորած Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք նահանգի (կենտրոնը Ամիդ) հյուսիս-արևմտյան մասին։ Եթե այդպես է, ուրեմն, Մարտիրուպոլիսը որպես այդ մասի կենտրոն հիշատակելուց երևում է, որ Դրասխանակերտցին, թերևս, կրկին միահյուսել է Հուստինիանոս I-ի և Մավրիկիոսի կազմավորած նահանգների մասին եղած տեղեկությունները։

42 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68։

43 Հ. Գելցեր. Սկզբնավորութիւնք բյուզանդական բանակաթեմերու դրութեան, թարգմ. Գ. Գարանֆիլյան. Վիեննա, 1903։ Նա Երկրորդ Հայքն էլ է համարել Դիոկղետիանոսի ժամանակվա արգասիք (էջ 27)։ Այնինչ, ինչպես վերը տեսանք, Երկրորդ Հայքը ստեղծվել էր 386 թ.։

44 Հ. Հյուբշման. Հին Հայոց տեղվո անունները. Վիեննա, 1907, էջ 38։ Հմմտ. P. Goubert. Byzance avant l'Islam. T. I, Paris, 1951, p. 296։

դոսուպոլիս՝ անուանէ զնա Մեծ մասն Մեծ Հայոց»[45]։ Այսպիսով, Մավրիկիոսը վերափոխեց Հուստինիանոսի Առաջին Հայքը, դրանից կազմելով երկու նահանգ, իսկ Երկրորդ Հայքը թողեց անփոփոխ։ Հավանաբար այս տեսանկյունից պետք է դիտել այն փաստը, որ Դրասխանակերտցին, միահյուսելով տարբեր տեղեկություններ և անձնավորություններ, հայտնում է, թե Մավրիկիոսը Առաջին Հայքը կոչել էր Երկրորդ Հայք, մինչդեռ դա Հուստինիանոսի ձեռնարկումն էր (Մավրիկիոսը այն թողեց անփոփոխ)։

Եթե Դրասխանակերտցին խոսել է Հուստինիանոսի Երրորդ Հայքի արևելյան հատվածի մասին, պատճառը թերևս այն էր, որ պատմիչի ըմբռնմամբ Թեոդոս I-ի (Հուստինիանոսի և Թեոդոսի անունները չորս Հայքերի կապակցությամբ պատմիչը չի տալիս) Երկրորդ Հայքի մի մասը զբաղեցրել էր Հուստինիանոսի Երրորդ Հայքի արևմտյան մասը։ Այստեղ մասամբ արտացոլվել է նաև այն իրողությունը, որ Թեոդոսի Երկրորդ Հայքը Հուստինիանոս I-ը վերանվանեց Երրորդ Հայք։

Կապադովկիայի հետ Փոքր Հայքի հնում եղած վերոհիշյալ կապի մասին տեղեկությունները բավականին աղավաղված ձևով, թերևս, արտացոլվել են նաև Դրասխանակերտցու (կամ նրա բնագրի ընդօրինակումների) շարադրանքում։ Այդ երևում է հետևյալ տողերից. «Իսկ զԿապադովկիայ, յորում մայրաքաղաքն է Կեսարիա՝ և Երկրորդ Հայք նախ անուանիւր, կոչէ զնա Երրորդ Հայք և առնէ զնա Եպարքի»[46]։ Հյուբշմանը նշել է, որ Կապադովկիան երբևիցե Երկրորդ կամ Երրորդ Հայք չի կոչվել[47]։ Փորձենք Դրասխանակերտցու այդ հաղորդմանը մոտենալ այլ տեսանկյունից։ Եթե հնարավոր լիներ այդ հատվածի առաջին մասում կարդալ. «Իսկ զԿապադովկիայ, յորում մայրաքաղաքն է Կեսարիա... և [զայն, որ] Երկրորդ Հայք նախ անուանիւր, կոչէ զնա Երրորդ Հայք...», ապա կարելի կլիներ ասել, որ գործ ունենք բնագրի հետագա աղճատման հետ։ Ի դեպ, Մատենադարանի Դրասխանակերտցու երկի № 1896 ձեռագրում (1689 թ.) բացակայում է «և» շաղկապը։ Այս հանգամանքը կարող է հուշել, որ շփոթությունն առաջացել է նախադասության առաջին մասից, որը Երկրորդ Հայքին վերաբերող հաղորդումից անջատ է եղել, ուստի այդպիսի անավարտ տեսքով այն կապ չունի երկրորդ մասի հետ։ Դրասխանակերտցու երկի 18-րդ էջում հիշատակված Երկրորդ Հայքի նկարագրությունից երևում է, որ իրոք 68-րդ էջում Երկրորդ Հայքի շաղկապումը Կապադովկիայի հետ ձեռագրական թյուրիմացություն պետք է լինի։ Հնարավոր է, որ մինչ աղճատվելը Դրասխանակերտցու բնագիրը Կապադովկիայի և Երրորդ Հայքի առնչությամբ իր մեջ բովանդակել է նաև «Աշխարհացույցի» վերոհիշյալ այն տեղեկությունը, ըստ որի Երրորդ Հայքը «յելից կալով Կապադովկիոյ»։

Նախադասության երկրորդ մասում հաղորդվող տեղեկության համաձայն, Մավրիկիոսը (որ սխալ է, պետք է լինի Հուստինիանոս I-ը) Երկրորդ Հայքը վերափոխեց Երրորդ Հայքի։ Հաջորդ տեղեկությունը՝ «իսկ զՄելիտինէ, որ ունի զհամանուն իւր գաւառս՝ է և Երրորդ Հայք, կոչէ զնա Առաջին Հայք», իրոք վերաբերում է Մավրիկիոսի գործունեությանը։ Ինչպես նշել է Գելցերը, VII դարի եկեղեցական ժողովների մասնակիցների ստորագրություններից նույնպես երևում է, որ Մելիտինեն, Առկան, Արաբիսոսը և Կուկուսոսը Առաջին Հայքի մեջ էին[48]։ Այդ քաղաքներին անհրաժեշտ է ավելացնել նաև Արիարաթիան և Կոմանան, որոնք, ինչպես նշել է Բարսեղ Հայը (Իալիմբանացի), նույնպես Առաջին Հայքի կազմում էին, որի կենտրոնը Մելիտինեն էր[49]։ Ըստ երե-

---

45 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68։

46 Նույն տեղում։ Համմ. Վարդան վարդապետ, էջ 59։

47 Հ. Հյուբշման. Նշվ. աշխ., էջ 38։

48 Georgii Cypri Descriptio Orbis Romani, ed. H. Gelzer. Lipsiae, 1890, LVIII.

49 Նույն տեղում, էջ 2 և 14։ Որոշ հետազոտողներ, չնայած նույնպես խոսում են Մավրիկիոսի վերափոխությունների մասին, սակայն շարունակում են Երրորդ Հայք անվանել այն տարածքը, որը Մավրիկիոսը վերանվանեց Առաջին Հայք։

վությունին, հարցը միայն նահանգների համարակալման փոփոխման մեջ չէր։ Հիշենք, որ Հուստինիանոսի ժամանակ տարբեր թվարկման Հայք անունը կրող նահանգները, ըստ կարգի, իրար հանդեպ տարբեր դիրք էին գրավում։

Հայքերի հետ կապված շփոթությունները հետևանք էին այն բանի, որ այդ նահանգների կազմավորումը և վերափոխությունները ընդգրկում էին նույն և հարակից տարածքները։ Իսկ քանի որ Մավրիկիոսի անձի շուրջ միջնադարյան Հայաստանում նույնիսկ առասպելներ էին հյուսվել[50], ապա դժվար չէ պատկերացնել, թե ինչու Դրասխանակերտցին Արամից հետո Մավրիկիոսի հետ է կապում Հայքերի վերակազմավորման գործը[51]։

Անանիա Շիրակացու «Աշխարհացույցում» Չորրորդ Հայքի մասին կարգում ենք. «Չորրորդ Հայք, որ է Ծոփաց կողմն յերի կայ Բարձր Հայոց և գաւառք են ի նմա ը. Խորձեն, Հաշտեանք, Պաղնատուն, Բալահովիտ, Ծոփք, Հանձիտ, Գաւրեք, Դէգիք...»[52]։ Ի տարբերություն Շիրակացու, Դրասխանակերտցին Չորրորդ Հայքի մասին, ինչպես վերը նշեցինք, տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող տեղեկություններ է հաղորդել. 1. Չորրորդ Հայքին վերաբերող Դրասխանակերտցու առաջին նկարագրությունը, թերևս, համապատասխանում է «Աշխարհացույցի» Չորրորդ Հայքի ընդհանուր տարածքին, 2. Չորրորդ Հայքի երկրորդ նկարագրությունում Դրասխանակերտցին հիշատակում է միայն Նփրկերտ-Հուստիանունիստ (Հուստինիանունիստ)-Մարտիրուպոլիս քաղաքը, որը «Աշխարհացույցում» Չորրորդ Հայքի կազմում չի նշված, իսկ Նփրկերտի գավառը բերված է Աղձնիքի կազմում։

Ն. Ադոնցը գրել է. «Հուստինիանոսի Չորրորդ Հայքը փոփոխությունների ենթարկվեց 591 թ. հողային նոր ձեռքբերումների հետևանքով։ Աղձնիքը կայսրությանն անցնելուց հետո Ծոփանենի և Ամիդի շրջանի հետ միասին կազմեց նոր նահանգ՝ Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք անունով, իսկ նախկին Չորրորդ Հայքը Խորձևանի ու Մուզուրի՝ Ներքին Հայքի կազմի մեջ (մինչ այդ —է. Դ.) մտնող գավառների հետ կազմեց եպարքիա, որը կոչվում էր Հուստինիանա կամ այլ Չորրորդ Հայք։ Առաջինի մայրաքաղաքը Ամիդն էր, երկրորդինը՝ Դաղիմը։ Այդ բաժանումը արտացոլվել է Գեորգ Կիպրացու աշխատությունում։ «Աշխարհացույցի» Չորրորդ Հայքը տարբերվում է Գեորգ Կիպրացու նույնանուն գավառից նրանով, որ դրա մեջ չի ընդգրկված Մուղուրը, իսկ Չորրորդ Հայքը կամ Վերին Միջագետքը «Աշխարհացույցում» կրում է հիմնականում այն կազմող շրջանի՝ Աղձնիքի անունը, ընդ որում, նրա մեջ մտնում է ոչ թե ամբողջ Ծոփանենն, այլ միայն դրա մի մասը, որը տեղադրված է Տիգրիսի ձախ ափին և կոչվում է Նփրկերտ, իսկ Տիգրիսի աջ ափը մինչև Բնաբեղ գուրս է նետված»[53]։ Ն. Ադոնցը նշել է, որ Դրասխանակերտցին դիտի այդ փոփոխությունների մասին, «ըստ որում Iustinianea-ն փոխանցում է Յուստ[ին]իանունիստ բառով»[54]։ Գելցերը, Գուբերը և այլ հետազոտողներ նույնպես այդ կարծիքին են, քանի որ Դրասխանակերտցու հաղորդումից հետևցնում են, որ վերջինս Չորրորդ Հայքն էր Հուստինիանա անվանել[55]։ Սակայն Դրասխանակերտցին բերել է նույն քաղաքի երեք անվանումները՝ Մարտիրուպոլիս-Նփրկերտ-Հուստինիանունիստ։ Ջոնսը նշել է, որ Մալալայի մի հաղորդման համաձայն Հուստինիանոսը Մարտիրուպոլիսը վերանվանեց Հուս-

---

50 Л. Меликсет-Бек. Из истории армяно-византийских отношений («Маврикиевы легенды» в памятниках культуры древней Армении).—Византийский временник, 1961, т. XX, с. 64—74.

51 Վաղ միջնադարում Հայաստանում կայսրությունը կարողացավ առավելագույն տարածքի տիրանալ միայն Մավրիկիոսի օրոք։

52 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, էջ 106։

53 Н. Адонц. Указ. соч., с. 234—235.

54 Նույն տեղում, էջ 234։

55 Georgii Cypril Descriptio..., LVIII. P. Goubert. Op. cit., p. 296.

տինիանուպոլիս[56] (չշփոթել Հուստինիանոսի Առաջին Հայքի նույնանուն մայրաքաղաքի հետ)։

Է. Հոնիգմանը Գեորգ Կիպրացու՝ իր հրապարակած տեքստի Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք նահանգի նկարագրության շարունակությունից դուրս է թողել մի հատված, որից բխում է, որ այդ նահանգի սահմանը VI դարի վերջում հասնում էր մինչև Բաղեշի լեռնանցքը[57]։ Այդ հատվածի լույսի տակ, թերևս, բացատրվի նաև Դրասխանակերտցու հետևյալ հաղորդումը. «Մեծն Հայոց մասն ինչ մնացեալ էր ի ձեռս Հոռոմոց կողմանց անտի ի Բասենոյ մինչև ի սահմանս Ասորեստանի Մեծ Հայք զնա (Մավրիկիոսը—Է. Դ.) կոչէ»[58]։ Այստեղ հիշատակված Ասորեստանի սահմանը պետք է համապատասխաներ Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք նահանգի հյուսիսային սահմանին։ Հետաքրքիր է նշել, որ Բաղեշի լեռնանցքը Թովմա Արծրունու երկի հետ հանդես եկող Անանունի գրվածքում անվանված է «դրունս Ասորեստանի»։ Դրա մոտակայքում հիշատակվում է Կոտոմ գյուղը (Տուրուբերանի ծայր հարավում գտնվող Երևարք գավառում), որը պատկանելիս է եղել Աղձնիքի իշխանական տանը[59]։

Descriptio-ում հիշատակվող Աղձնիքի կազմում հանդես եկող ամրոցքաղաքներից (Ափում, Արիբախոն, Քղիմար, Դաֆնուդին, Բաղեշ[60], Սամոկարտա) առավել տարակարծություն է առաջացրել Ἀριβαχων-ը[61]։ Թերևս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել Ἀριβαχων ընթերցվածի վրա։ Այս անունը պետք է հնագույն ծագում ունենա։ Դրա հիմքում, թերևս, ընկած է վերոհիշյալ ἄριμοι (Մարկվարտի կողմից արմենների հետ էր նույնացվել) ցեղանունը։ Պատմական Աղձնիքի տարածքում, այժմյան Բաթմանսու (հին հայկական Քաղիրթ) գետի ձախ ափին, այժմյան Ալմադին քաղաքից հարավ-արևելք և հին հայկական Քղիմար քաղաքից հարավ գտնվում է «Էրմի» բնակավայրը, որը, կարծում ենք պետք է համապատասխանի պատմական Ἀριβαχων (Արիմախոն)-ին։

Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք նահանգը, որի կենտրոնը Ամիդն էր[62], տարածվում էր մինչև Բաղեշի լեռնանցքը և Վանա լճի հարավ-արևմտյան առափնյա շրջանը՝ Ընձաքիսար լեռը, Մոկքի արևմտյան եզրագիծը և Ջերմ գետի ստորին հոսանքի շրջանը։

«Աշխարհացույցի» Չորրորդ Հայքը, ինչպես նշել է Ն. Ադոնցը, համապատասխանում էր «այլ Չորրորդ Հայքին» Դաղիմ կենտրոնով։ «Աշխարհացույ-

---

56 A. H. Jones. The Cities of the Eastern Roman Provinces, second ed., Oxford, 1971, p. 225, 444.

57 Georgii Cyprii Descriptio..., p. 945—947; Le Synekdemos d'Hieroclès et l'opuscule géographique de Gèorge de Chypre, ed. E. Honigmann. Bruxelles, 1939, p. 65. Ըստ Է. Հոնիգմանի, այդ նահանգը մինչև Բաղեշ չէր հասնում (E. Honigmann. Die Notitia des Basileios von Ialimbana.—Byzantion, t. IX, 1934, S. 214.

58 Հովհաննես Դրասխանակերտցի, էջ 68։

59 Թովմայի վարդապետի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, ի լոյս էած Ք. Պատկանյան. Ս. Պետերբուրգ, 1887, էջ 297։

60 Գելցերը (նշվ. աշխ., էջ 175—176) և Հոնիգմանը ենթադրել են, որ Աղձնիքում հիշատակվող այս Βαλοῦς-ը Βαιουλοῦος-ի զուգահեռն է և այն նույնացրել են Բալուի (այժմյան Պալու) հետ։ Իր կողմից հրապարակած քարտեզում Հոնիգմանը Βαλουος-ը նշել է Բալահովիտում (E. Honigmann. Die Ostgrenze des Byzantinischen Reiches von 363 bis 1071. Bruxelles, 1935, S. 31—32, Karte I)։ Սակայն Βαλουος-ը պետք է առնչվի նույն Աղձնիքում հիշատակվող Βαλαλεισων-Բաղեշի հետ, իսկ Βαιουλοῦος-ը, որը նշված է «այլ Չորրորդ Հայքի» կազմում, Βαλαχηνῶ-Բալահովիտում գտնվող նույն Բալուն է։

61 W. Tomaschek. Sasun und das Quellengebiet des Tigris. Sitzungsber. Akad. Wien. Bd. CXXXIII (IV). 1895, S. 15; J. Markwart. Südarmenien und die Tigrisquellen. Wien. 1930, S. 423; E. Honigmann. Op. cit., S. 30—31.

62 Տե՛ս Н. Адонц. Указ. соч., с. 234։

ցում» Զորրորդ Հայքը «Ծոփաց կողմն» կոչելը և դրա կազմում Նփրկերտի բացակայությունը արտացոլում է այն իրողությունը, որ խոսքը իրոք վերաբերել է, ի թիվս հիշյալ գավառների, նաև նախկին Շահունի (Շահեի) Ծոփքի տարածքն ընդգրկող նահանգին՝ «այլ Զորրորդ Հայքին» և ոչ թե նախկին Մեծ Ծոփքի տարածքում գտնվող Զորրորդ Հայքին (կամ Վերին Միջագետք նահանգի հյուսիս-արևմտյան մասին)[63]։ Անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, որ Զորրորդ Հայքը «Ծոփաց կողմն» է անվանվում «Աշխարհացույցի» ընդարձակ խմբագրությունում։

Խորենացու Պատմության ձեռագրերում Արամի գործունեությանը վերաբերող հատվածում Երրորդ և Զորրորդ Հայքի մասին տեղեկությունները ընդմիջարկվել են կամ «Աշխարհացույցի» համառոտ խմբագրությունից (ընդարձակում Երրորդ Հայքը չի հիշատակված, որը հավանաբար հնուց եկող ձեռագրական վրիպում է) կամ որևէ այլ աղբյուրից, իսկ Ծոփքի կապակցությամբ Զորրորդ Հայքի մասին տեղեկությունը, թերևս, ընդմիջարկվել է «Աշխարհացույցի» ընդարձակ խմբագրությունից կամ Սեբեոսի Պատմությունից (կամ էլ նրա աղբյուրից), ուր պահպանվել է «Զորրորդն կոչեցեալ Հայոց» արտահայտությունը[64], որը բնագրային է։ Պետք է նկատի ունենալ, որ Խորենացու երկի բնագրում եղած ավելի հին՝ Ծոփք պատմաաշխարհագրական հասկացությանը կցվել են «Զորրորդն կոչեցեալ Հայոց» ավելի ուշ շրջանին համապատասխանող բառերը։ Եթե Խորենացու երկի ձեռագրերում այդ բառերը ընդմիջարկվել են «Աշխարհացույցի» ազդեցությամբ, ապա նկատի ունեն Մավրիկիոսի «այլ Զորրորդ Հայքը», իսկ եթե այլ աղբյուրի ազդեցությամբ, ապա կարող են նկատի ունենալ նաև Հուստինիանոսի Զորրորդ Հայքը։ Ամեն դեպքում, բնագրի Ծոփքը (որպես գավառ) և ընդմիջարկված «Զորրորդ Հայքը» իրար հարաբերում են ինչպես մասը ամբողջին։ Այն, որ Խորենացու երկում Արիստակեսի սպանության կապակցությամբ և Ծոփքի առնչությամբ հիշատակվող Զորրորդ Հայքին վերաբերող բառերը ընդմիջարկություն են, երևում է նաև Փավստոս Բուզանդի և նույնիսկ հետագայում Հովհաննես Դրասխանակերտցու մոտ[65] այդ գրվագի կապակցությամբ «Զորրորդ Հայք» անվան բացակայությունից։

Արամին վերաբերող հատվածում «Երրորդ» և «Զորրորդ» Հայք բառերը Խորենացու երկի ձեռագրերում, թերևս, ընդմիջարկվել են մինչև X դարը, քանի որ այդ ընդմիջարկությունները ազդել են Դրասխանակերտցու երկի՝ Արամին վերաբերող հատվածի վրա։ Անանիա Շիրակացու՝ «Զորրորդ Հայք, որ է Ծոփաց կողմն» և Սեբեոսի՝ «Զորրորդ կոչեցեալ Հայոց» հիշատակություններից կարելի է ենթադրել, որ Խորենացու երկի ձեռագրերում «Զորրորդն կոչե-

---

63 «Աշխարհացույցի» Նփրկերտ գավառի կազմում, թերևս, հանդես էր գալիս Անգեղ-տան տարածքը, որի անունը չի հիշատակված նաև Descriptio-ում (հմմտ. A. Jones. Op. cit., p. 235)։ Նկատի ունենանք նաև, որ Աղձնիքը ավելի հին պատմաաշխարհագրական հասկացություն էր, իսկ Վերին Միջագետք նահանգը ընդգրկում էր ավելի մեծ տարածք։ Հիշենք, որ մինչև 37 թ. Մեծ Հայքի կազմի մեջ է եղել Միջագետք Հայոցը։ Հետագայում Միջագետք անունը կրող հռոմեական նահանգը, որը ընդգրկում էր նաև Հայաստանի հարավ-արևմտյան որոշ գավառները, ավելի ընդարձակ տարածք էր զբաղեցնում։ Ուրոյենեի անջատումից հետո Միջագետք նահանգի կենտրոնը դարձավ Մծբինը, իսկ վերջինիս 368 թ. պարսիկներին անցնելուց հետո՝ Ամիդը։ Այդ նահանգի մեջ մտնող Ամիդի, Ծոփքի, Անձիտի, Մարտիրոպոլսի, Անգեղ-տան և Ծոփանենայի եպիսկոպոսները մասնակցել էին Քաղկեդոնի 451 թ. ժողովին (տե՛ս Н. Адонц. Указ. соч., с. 39, 363)։ Նշենք, որ դեռևս կարոտ են ուսումնասիրության Փավստոսի հաղորդումները Աղձնիքում Տիգրանակերտի գտնվելու և Մեծ Ծոփքի առանձին հիշատակվելու մասին (Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ. Դ, իդ. ե, իէ), ինչպես նաև Խորենացու երկում Տիգրանակերտի հիշատակվելու (Ա, իգ, լա. Դ, իդ, իը), իսկ Անանիա Շիրակացու «Աշխարհացույցում»՝ չհիշատակվելու հարցը։

64 Նաև «զՉորրորդ Հայս» (Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Արզարյանի. Երևան, 1979, էջ 165, 171)։

65 Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ. Դ, բ։ Հ ո վ հ ա ն ն ե ս Դ ր ա ս խ ա ն ա կ ե ր տ ց ի, էջ 41։

ցեալ Հայոց» բառերը ընդմիջարկվել են VII դարից ոչ շուտ։ Այդ ընդմիջարկությունը նույնպես կարող էր մինչև X դարը տեղի ունեցած լինել (նույնը կարելի է ասել Ծոփաց նախարարության կապակցությամբ ընդմիջարկված «Չորրորդն կոչեցեալ Հայս» բառերի մասին), սակայն Խորենացու երկի միայն որոշ ձեռագրերում։ Եթե չասենք, թե այդ ընդմիջարկությունը կատարվել է X դարից հետո, ուրեմն Դրասխանակերտցու կողմից օգտագործվել են Խորենացու երկի այն ձեռագրերը, որոնցում Արիստակեսին վերաբերող հատվածում «Չորրորդն կոչեցեալ Հայոց» բառերը դեռևս ընդմիջարկված չեն եղել։ Իսկ եթե Ծոփքի կապակցությամբ ընդմիջարկությունը կատարվել է X դարից հետո, ուրեմն Դրասխանակերտցու ժամանակ Խորենացու երկում ընդմիջարկվել էին միայն «Երրորդ» և «Չորրորդ» Հայք բառերը Արամին վերաբերող հատվածում։

«Աշխարհացույցի» զանազան ժամանակներում արտագրված և խմբագրված ձեռագրերի առանձնահատկություններով են պայմանավորված Խորենացու երկի ձեռագրերում առկա նշված ընդմիջարկությունները, որոնք նույնպես կարող են տարբեր ժամանակների արգասիք լինել[66]։ Ուրեմն, Խորենացու երկի ձեռագրերում Արամին վերաբերող հատվածում «Երրորդ» և «Չորրորդ» Հայք ընդմիջարկված բառերը իրենց մեջ բովանդակում են Հուստինիանոս I-ի ժամանակ ստեղծված նահանգների անունները, իսկ այդ նահանգներից վերջինը տրոհվեց Մավրիկիոսի ժամանակ և «այլ Չորրորդ Հայքի» կազմով (բացառությամբ Մնձուրի), սակայն Չորրորդ Հայք անունով, գրանցվեց «Աշխարհացույցում» ու ազդեց Խորենացու երկի ձեռագրերի վրա։ Ինչ վերաբերում է Դրասխանակերտցուն, ապա նա օգտվել է նաև այլ աղբյուրներից և նրա երկում Չորրորդ Հայքի կապակցությամբ, ինչ-որ չափով, արտացոլվել են տեղեկություններ Հուստինիանոս I-ի Չորրորդ Հայքի, Մավրիկիոսի «այլ Չորրորդ Հայքի»[67] և, թերևս, Վերին Միջագետք կամ Չորրորդ Հայք նահանգի հյուսիս-արևմտյան հատվածի մասին[68]։

Այսպիսով, V դարում ապրած Մովսես Խորենացու երկի բնագրում խոսք չէր կարող լինել և չի եղել Երրորդ և Չորրորդ Հայքերի մասին։ Այս տեսանկյունից սրբագրելով Խորենացու երկի նշված հատվածները, կվերանա ընդմիջարկություններից առաջացած վերոհիշյալ հակասությունը, որը թափանցել է նաև Դրասխանակերտցու երկի մեջ։ Չորս Հայքերի կապակցությամբ տարվող հետազոտությունները հնարավորություն են ընձեռում քննելու մի շարք հարցեր, որոնք վերաբերում են Մովսես Խորենացու, Անանիա Շիրակացու և Հովհաննես Դրասխանակերտցու երկերի հեղինակային բնագրերին, վերջիններիս արտագրություններին, ինչպես նաև հիշյալ մատենագիրների երկերի հետագա ընդօրինակություններում առաջացած դրչական փոխազդեցություններին։

---

66 Ինչպես նշեցինք, հնարավոր է, որ Խորենացու երկի ձեռագրերում ընդմիջարկությունները նաև այլ աղբյուրների ազդեցությամբ առաջացած լինեն։ Սակայն միջնադարյան Հայաստանում հիմնական աշխարհագրական երկը մնում էր Անանիա Շիրակացու «Աշխարհացույցը», որի ազդեցությամբ էլ, զգալի չափով, ձևավորվում էին հայ պատմիչների պատմաաշխարհագրական պատկերացումները։

67 Կարծիք է հայտնվել, թե «այլ Չորրորդ Հայք» նահանգը, որը կրում էր նաև Հուստինիանեա անունը, կազմվել էր Հուստինիանոս II-ի (685—695, 705—711) օրոք (E. Honigmann. Die Notitia des Basileios von Ialimbana. S. 217)։ «Աշխարհացույցի» տվյալները հիմք չեն տալիս նման եզրակացության համար։ Անանիա Շիրակացին այն գրել է նախքան Հուստինիանոս II-ի ժամանակները, և «Աշխարհացույցը» իր մեջ պարունակում է տեղեկություններ, որոնք վերաբերում են «այլ Չորրորդ Հայքի» տարածքին, չնայած տրված են Չորրորդ Հայք ընդհանուր անվան տակ, առանց «այլ» բառի։

68 Բյուզանդիային 591 թ. անցած Հայաստանի մնացած մասում Մավրիկիոսը ստեղծեց «Մեծ Հայք», «Ներքսագույն Հայք», «Ներքսագույն Հայք» նահանգները։ Թեոդոսուպոլիսը մնացել էր խոր թիկունքում, ուստի Մավրիկիոսը բյուզանդական զորքերի ռազմական կենտրոնը Հայաստանում դարձրեց Շիրակաշատը, որը վերանվանվեց Մավրիկուպոլիս։

АРМЯНСКИЕ ИСТОЧНИКИ О РАННЕВИЗАНТИЙСКИХ ВОЕННО-АДМИНИСТРАТИВНЫХ ДЕЛЕНИЯХ ЗАПАДНОЙ АРМЕНИИ

Э. Л. ДАНИЕЛЯН

Резюме

После римско-персидского раздела царства Великой Армении (385 г.) Феодосии I (379—395) в 286 г., разделив Малую Армению, образовал провинции Первая и Вторая Армения. Согласно указу (ок. 529 г.) Юстиниана I (527—565) военная власть над «Великой Арменией» (которая называлась также Внутренней Арменией), Первой и Второй Арменией, Понтом Полемонийским и армянскими княжествами («сатрапиями»— власть принадлежала армянским нахарарским родам) юго-западной Армении была вверена магистру войск Ситте. Эти сведения, как показал Н. Адонц, согласуются с соответствующими сообщениями Прокопия Кесарийского.

В 536 г., согласно 31-й новелле, Юстиниан на армянских землях образовал новые провинции—Первая, Вторая, Третья и Четвертая Армения. При исследовании этой проблемы необходимо руководствоваться фундаментальной монографией Н. Адонца «Армения в эпоху Юстиниана». В последнее время высказано ошибочное мнение, что Четвертая Армения существовала еще до реформ Юстиниана и даже в период царствования армянских Аршакидов (т. е. до 428 г.).

Сравнительный анализ рукописей и текстов сочинений Мовсеса Хоренаци и Фавстоса Бузанда (V в.), Анании Ширакаци (VII в.) и Ованеса Драсханакертци (X в.) показывает, что Хоренаци знал о Первой и Второй Армении Феодосия I, а Анания Ширакаци, кроме того, о Третьей Армении Юстиниана и Четвертой Армении («другой Четвертой Армении») Маврикия. Прав Ст. Малхасянц, считая интерполяцией слова «Третья» и «Четвертая» Армения в текст Хоренаци среди сведений, относящихся к Араму. То же самое выясняется относительно слов «Четвертая Армения», которые интерполированы в другие части текста Хоренаци. В изложении Драсханакертци переплетаются сообщения, касающиеся византийских делений разных периодов; оригинальными являются сообщения о том, что Маврикий образовал Первую Армению из Третьей, а также образовал провинции—Часть Великой Армении, Большая часть Великой Армении, Великая Армения, Внутренняя Армения, Глубинная Армения.

Военно-административные реформы империи диктовались ее захватнической политикой в Армении.